



ԱՐԵՎՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ (ԽՈՐՀՐԴԱՐԱՆ) ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

**Արևմտեան Հայաստանի (Խորհրդարանի) Ազգային ժողովի Երկրորդ
Գումարման Յոթերորդ լիազույժար նիստը**

2022-ը մայիս, 28 նիստի սկիզբը ժամը 11:30-ին, ավարտը՝ 18:30-ին Հայաստան,
Երևան :

նիստի սկիզբը ժամը 09:30 -ին, ավարտը՝ 16:30 -ին Շվեյցարիա, Ժնև :

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

**Մեկ րոպե լռությամբ հարգվեց զոհվածների հիշատակը
Հնչեց Արևմտյան Հայաստանի Հանրապետության օրհներգը**

Ընտրված 49 պատգամավորներից ներկա էին 18 պատգամավոր Հայաստանում և Ժնևում, որոնց տրված էր 12 լիազորագիր, ընդհանուր թիվը 30, երկու դահլիճների և պատգամավորներու կապը (Skype ծրագրի միջոցով) , բացակա 19 պատգամավոր :

Առաջին նիստ

ա. Լսեցին՝

Խորհրդարանի նախագահ **Նելլի Հարությունեանի** բացման խոսքը

բ. Լսեցին՝

Հաստատել նիստին ներկայ և բացակայ պատգամավորներու ցանկը և լիազորուած պատգամավորներու լիազորությունները

Որոշեցին՝

**30-ներկա պատգամավոր (12- լիազորություն)
19-բացակա**

գ. Լսեցին՝

Հաստատել նիստի օրակարգը եւ ներկայացնել

դ. Լսեցին՝

Ներկայացնել եւ հաստատել պատգամավորներու նոր թեկնածություններ (Պատուիրակագիր մինչև Դեկտեմբեր 2023 թուականը) ներկայացուեց մեկ թեկնածություն, որը հաստատեցին միաձայն:

Որոշեցին՝

Ասադուր Բալկը միաձայն ընդունվեց, որպես նոր պատգամավոր

ե. Լսեցին՝

Աժ պատգամավորական յանձնաժողովներու մասնավորապես՝ յանձնաժողովի նախագահներու հաշվետուություններ, նրանք ներկայացրեցին հաշվետուություննեու ընթացիկ ժամանակահատուածի համար:

ա) Վետերաններու և հաշմանդամութիւն ունեցող անձանց և հայրենասիրական, հասարակական և համայնքային կազմակերպութիւններու յանձնաժողով.

Ներկայագրեցին Վրէժ Արքահամեանը, Ժան Ղազարոսեանը

բ) Էքսպարանական յանձնաժողով (Օրինագծեր մշակող յանձնաժողով)

Ներկայագրեց Նելլի Հարությունեանը

գ) Կրթական, գիտական, առևտրային և տեղեկատուական ռեսուրսներու կառավարման յանձնաժողով

Ներկայագրեց Անի Բեդեկեանը

գ. Լսեցին՝

Ներքին կանոնակարգում նոր հնարավոր փոփոխութիւնները և ընթացիկ տարուայ նոր գործադիր բանաձեւերու քննարկում

Ընթերցվեց ԱԺ Ներքին Կանոնակարգի լրացումներով ամբողջացուած հատուածը:

Է. Լսեցին՝

Նախընտրական քարոզարշավի կազմակերպման մասին

Քանի որ ԱՀՀ -ն 2023 թուականը հայտարարել է նախընտրական տարի, ուստի 2022 թուականի Դեկտեմբերի լիազումար նիստը վերջին հնարավորութիւնն է լրացնել ԱԺ պատգամաւորի այժող 30 քաղաասացիների ստորագրութեամբ, 2023 թուականի թեկնածուների նախընտրական ստորագրահավաքի համար հաստատվել է 80 քաղաքացիների ստորագրութիւն:

Նախընտրական քարոզարշավը կկազմակերպուի հատուկ ծրագրի միջոցով, էլեկտրոնային տարբերակով: Կնտրվի հաշվիչ յանձնաժողով, որը կգրանցի պատգամաւորութեան թեկնածուներուն և նրանց հաուաքած ձայները :

ը. Լսեցին՝

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ **Ա.Արքահամեանի**

առաջարկութիւնը՝ որպէս պատգամաւոր միանալ խորհրդարանական ընտրութիւններուն:

Որոշեցին՝

միաձայն ընդունում

թ. Լսեցին՝

Քանի որ 2023թ. Նախընտրական է քննարկուեց 2023թ. նոր ԱՀՀ նախագահի և ԱԺ նախագահի թեկնածուներու հարցը և ինչ չափորոշիչներով պետք է առաջնորդուել ընտրութեան ժամանակ :

ժ. Լսեցին՝

Պատգամաւորներու ելույթներ:

Որտեղ ելույթ ունեցան, պատգամաւոր Սարգիս Նարոեանը, պատգամաւոր Ռազմիկ Խաչատրեանը և պատգամաւոր Սիմոն Դարոնեանը

Երկրորդ նիստ

ա. Լսեցին՝

Պատգամաւորներու ելույթներ,

պատգամաւոր Բենիամին Հովհաննիսեանը, պատգամաւոր Գիլերմո Կարամանեանը և պատգամաւոր ֆարիադ Նազարեթեանը

բ. Լսեցին՝

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ **Ա.Աբրահամեանի** ելույթը և
Ազգային Սահմանադրութեան փոփոխութիւններու առաջարկները

Որոշեցին՝

Յօդուած 70ի մէջ կատարելիփոփոխություն, կապուած տարիքային սահմանափակումներու հետ (70-ը դարձնել 80), որը ընդունեց. 28-կողմ, 1-դեմ, 1-ձեռնպահ ձայներով:

գ. Լսեցին՝

Արեւմտեան Հայաստանի կառավարութեան վարչապետ **Սեդա Մելիքեանի** եւ նախարարութիւններու աշխատանքները

Ելույթ ունեցաւ

Արտաքին գործերի նախարար **Լիդիա Մարկոսեանը**

Հնչեց հարց- կարող ենք արդո՞ք ունենալ քանակով ավելի պատվո հյուպատոսներ. Օրինակ՝ Ուրուգվայում.

Տիկին Լիդիա Մարկոսեանը *պատասխանեց* կքննարկենք այդ հարցը.

Ելույթ ունեցաւ ՊՆ փոխնախարար **Սուրեն Շահումեանը**

դ. Լսեցին՝

Սուրեն Շահումեանի ելույթը՝ Արեւմտեան Հայաստանի նախագահ **Ա.Աբրահամեանին** կրկին ընտրելու որպէս նախագահ և առաջարկուեց **Արմենակ Աբրահամեանին** շնորհել պատվաւոր նախագահ կոչումը :

ե. Լսեցին՝

Խորհրդարանի նախագահ **Նելլի Հարությունեանի** փակման խոսքը

Աննի Բեդլեան

Արեւմտյան Հայաստանի Ազգային Ժողովի (Խորհրդարանի) Քարտուղար

Նելլի Հարությունեան

**Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան (Խորհրդարանի) Ազգային Ժողովի
Նախագահ**

Արմենակ Աբրահամեան

Արեւմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախագահ

parliament@western.armenia.eu